DOI:10.56653/18290361-2024.14-94

Լյուբա Կիրակոսյան

Ճարտարապետության դոկտոր, պրոֆեսոր

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան, Երևանի պետական համալսարան

kirakosyanlyuba@gmail.com

ԱՆԻ-ՇԻՐԱԿԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԱՅԻՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ*

Հիմնաբառեր. Անի, Արցախ, պաշտամունքային ճարտարապետություն, հորինվածք, կառուցվածք, համեմատական վերլուծություն:

Ներածություն

Միջնադարյան Հայաստանի ճարտարապետական մշակույթը հարուստ է իր ճարտարապետական դպրոցներով, որոնք այդ մշակույթի անբաժանելի մասն են կազմում: Տեղական և տեղագրական պայմաններով թելադրված առանձնահատկություններ ունենալով հանդերձ, Անի-Շիրակի և Արցախի ճարտարապետական դպրոցները դրսևորում են նաև ընդհանրություններ: Շիրակի ճարտարապետական դպրոցն Արցախի հետ համեմատած, ավելի լավ է ուսումնասիրված: Դեռևս նախախորհրդային շրջանի (Ալիշան 1881, 37-110, Марр, 1898, Орбели 1910, Буниатов 1915), ապա նաև խորհրդային շրջանի հրատարակություններում (Марр 1934, Թորամանյան 1942: Հարությունյան 1964, ԴՀՄ 1966, Токарский 1973, Тьерри 1977, Кипшидзе 1972, Каковкин 1987, 105-107, Thierry 1993 և այլք) անդրադարձ կա Անիի եկեղեցական ճարտարապետությանը: Արցախի պաշտամունքային ճարտարապետության ուսումնասիրությունը ավելի ուշ է սկսվել: Պատմա-քաղաքական իրադարձությունները մշտապես խոչընդոտել են այդ գործին: Արցախի «արգելափակված» վիճակը թույլ չէր տալիս հաղորդակից լինելու երկրամասի ճարտարապետական ժառանգության հետ և անընդհատ բարդություններ էր հարուցում դրա ուսումնասիրության համար: Դրանով հանդերձ, հայագետ հետազոտողները երկու տարածաշրջանների ճարտարապետական ժառանգությանը նվիրված իրենց աշխատանքներում (Якобсон 1972, 1977, Հասրաթյան 1992, Հարությունյան 1992, Մկրտչյան 1985) անդրադառնում են երկրամասի պաշտամունքային կառույցների հատակագծային, ծավալատարածական և փոխառնչությունների հարցերին: 1980-ականներից հետո Արցախի պաշտամունքային ճարտարապետությունը նաև արտասահմանյան գիտնականների հետաքրքրությունների շրջանակում է (Պաու-

* Ստացվել է 02.07.2024, ուղարկվել է գրախոսման 09.07.2024, ընդունվել է տպագրության 01.11.2024:

լո Կունեո, Ալպագո Նովելլո, Ժան Միշել Թիերի, Պատրիկ Տոնապետյան և այլք)։ Պաուլո Կունեոն մասնագիտական գրականության մեջ առաջին անգամ նշել է հայկական ճարտարապետության Արցախի դպրոցի գոյությունը (Cuneo 1978)։ Անի-Շիրակի և Արցախի կարևոր հուշարձանների համեմատական քննությունն է իրականացված Մ. Հասրաթյանի (Հասրաթյան 1992), Ա. Ղազարյանի աշխատանքներում (Казарян 2012)։ 2000-ականներից հետո Արցախի ճարտարապետական հուշարձանների հատակագծային և ծավալատարածական հորինվածքի հարցերն արծածված են մեր հրատարակություններում (Киракосян 2023, Պետրոսյան, Կիրակոսյան, Սաֆարյան 2009), որտեղ դիտարկված են նաև մշակութային ամբողջականության և առնչությունների խնդիրները։

Այս հետազոտության նպատակն է Անիի և Արցախի ճարտարապետական դպրոցների առնչությունների հարցը քննարկել տարբեր՝ հորինվածքային, կառուցվածքային, գեղարվեստական տեսանկյուններից՝ քննության վերցնելով առավել տիպական պաշտամունքային կառույցները։ Աշխատանքն այսօր ավելի քան արդիական է, քանզի Արցախի ճարտարապետական ժառանգության նկատմամբ ոտնձգություններն ու հայ միջնադարյան մշակույթից նրան օտարելու Ադրբեջանի՝ դեռևս անցյալ դարի երկրորդ կեսից վարած քաղաքականությունը աննախադեպ տեմպեր է վերցրել։ Հրատապ անհրաժեշտություն կա ակադեմիական և անաչառ քննությամբ ցույց տալ այս երկու դպրոցների միջև եղած սերտ կապը և այն ընդհանրությունները, որ ունի Անի-Շիրակի և Արցախի ճարտարապետական ժառանգությունը։ Հետազոտության մեջ օգտագործվել են տարբեր մեթոդներ՝ հուշարձանների փորձի ներկայացում և ընդհանրացում, համեմատական վերլուծություններ ու տիպաբանական բնութագրումներ, դաշտային դիտարկումներ։

Հորինվածքային առնչություններ

Ինչպես Շիրակի, այնպես էլ Արցախի ճարտարապետական դպրոցներում եկեղեցական ճարտարապետությունը զարգացել է վաղմիջնադարյան ավանդույթների վրա։

Արցախի ճարտարապետական դպրոցում լայն տարածում է ստանում վաղմիջնադարյան թաղածածկ դահլիճի հորինվածքը (նկ. 1)։ Այս տարածաշրջանի վանական համալիրների մեծ մասում եկեղեցիների այդ տիպն ունի ուղղանկյուն խորան։ Այդպիսին են Հանդաբերդի, Եղիշա առաքյալ վանքերի, Գտչավանքի, «Բռի եղցիի», «Օխտ եղցիի», Կոշիկ անապատի եկեղեցիները (Պետրոսյան, Կիրակոսյան, Սաֆարյան 2009, 34), Խաթրավանքի կողային մատուռները (Հասրաթյան 1992, 69)։ Հատկանշական է, որ Արցախում հորինվածքային այս տիպը կիրառվել է վանական համալիրների ինչպես գլխավոր, այնպես էլ փոքր եկեղեցիների կառուցման ժամանակ, մինչդեռ Անիի եկեղեցական օրինակներում նմանատիպ լուծում հանդիպում ենք միայն փոքր եկեղեցիներում։ Ուղղանկյուն խորանի կիրառությունը Անիի ճարտարապետության մեջ նույնպես քիչ է հանդիպում։ Նմանատիպ լուծումներ ունեն Անիի Իգաձորի (Токарский 1973, 54) և Ծաղկոցաձորի (Токарский 1973, 58) վիմափոր եկեղեցիները, Անիի Բագրատունյաց պալատի եկեղեցին։ Պետք է նշել, որ ավագ խորանի ուղղանկյուն ձևը քրիստոնեական

աշխարհի պաշտամունքային ճարտարապետության մեջ ընդունված էր վաղ միջնադարից սկսած: Այն կիրառվել է Սիրիայի, Միջագետքի, Եգիպտոսի, Եվրոպայի միանավ և եռանավ բազիլիկներում (Հասրաթյան 1992, 95):

Հայկական ճարտարապետության մեջ ավելի քիչ, բայց նույնպես վաղ միջնադարից սկսած այդ ձևը կիրառվել է եկեղեցիների խորանների համար: Որոշ հետազոտողներ գտնում են, որ վաղագույն հայկական բազիլիկները ուղղանկյուն խորան են ունեցել (Սահինյան, 1955, 69-72), որոնցից պահպանվածը Արագածոտնի մարզի Արագյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին է: Այստեղ, ուղղանկյուն խորանը երկայնական պատերի հաստացման հաշվին աղոթասրահից զգալի նեղացել է: Մի քիչ ավելի ուշ (858-929թթ.) կառուցված Բյուրականի եկեղեցում նույնպես աղոթասրահն ավարտվում է ուղղանկյուն խորանով, որի երկու կողմերում կան ավանդատներ: Եկեղեցու աղոթասրահն ու բեմը թաղածածկ են: Ձարգացած միջնադարի դարաշրջանին պատկանող, ուղղանկյուն խորանով վիմափոր եկեղեցիներ պահպանվել են Անիում՝ Իգաձորում և Ծաղկոցաձորում (Токарский 1973, 54, 58), Մարցում, Ձագավանքում:

Վաղմիջնադարյան գմբեթավոր դահլիճի հորինվածքը (Արուճ, Դդմաշեն, Պտղնի) ևս ներկայացված է երկու տարածաշրջաններում (նկ.2):

Գտչավանքի գլխավոր և Դադիվանքի հարավային եկեղեցիները պատկանում են գմբեթավոր դահլիճի միայն մեկ զույգ մույթով (արևելյան մույթերը համատեղված են խորանի անկյունների հետ) հորինվածքային ենթատիպին: Նման լուծումներ ենք հանդիպում Անիի Տիգրան Հոնենցի, Պեմզաշենի Առաքելոց և Մակարավանքի գլխավոր եկեղեցում: Հորինվածքային այս տիպը սերում է Հայաստանի վաղ միջնադարի դասական գմբեթավոր դահլիճներից և նշված եկեղեցիներում նույնությամբ չի կրկնվել: Ձարգացած միջնադարի վարպետները ստեղծագործաբար են անդրադարձել այդ հորինվածքին՝ աղոթասրահում որմնամույթերի և արևմտյան պատի միջև ընկած տարածություններում ավանդատներ են տեղադրել: Արդյունքում առաջացել է հորինվածքային նոր՝ ներքուստ խաչաձև, չորս անկյուններում ավանդատներով, արտաքուստ ուղղանկյուն եկեղեցիների տիպը: Գանձասարի Սբ. Հովհաննես Մկրտիչ և Դադիվանքի Արզուխաթունի եկեղեցիները պատկանում են այս՝«ներգծված խաչ» հորինվածքային տիպին (նկ. 2): Շիրակում այն դիտարկվում է Հառիճավանքի Սբ. Աստվածածին եկեղեցու օրինակով: Վերոնշյալ բոլոր հուշարձաններն իրենց հատակագծային և ծավալատարածական լուծումներով ու համաչափություններով արդեն ավելի մոտ են կենտրոնակազմ հորինվածքներին, քան գմբեթավոր դահլիճներին, որոնցից որ առաջացել է հորինվածքային այս տիպը:

Կառուցվածքային առնչություններ

Արցախի և Շիրակի ճարտարապետական դպրոցների միջև եղած ընդհանրություններն արտահայտված են ոչ միայն պաշտամունքային և աշխարհիկ շենքերի հորինվածքներում, այլ նաև կոնստրուկցիաներում: Գանձասարի, Դադիվանքի, Գտչավանքի գլխավոր եկեղեցիների ճակատները մշակված են զույգ, եռանկյունաձև կտրվածքով խորշերով, որոնք մշակված լինելով դեռևս վաղ միջնադարում

(հոիփսիմեատիպ եկեղեցիներ) և ստանալով «հայկական խորշեր» անվանումը տարածում են ստանում նաև 9-14-րդ դարերի հայկական հուշարձաններում (նկ. 3)։

Երկու տարածաշրջանների հուշարձանների գմբեթների վեղարների կառուցման մեջ ևս դիտվում են ընդհանրություններ։ Հովհարաձև մշակում ունեն Դադիվանքի, Գտչավանքի, ինչպես նաև Մարմաշենի գլխավոր և Ամբերդի եկեղեցիների վեղարները (նկ. 4)։ Հովհարաձև վեղարը բնորոշ է Բագրատունյաց Հայաստանի եկեղեցիներին։ Ինչպես նշում էր Լեոն. «Արցախի ճարտարապետությունը կրում է Բագրատունյաց ոճի կնիքը» (Լեո 1885, 247)։

Ճարտարապետական մանրամասներ, դեկորատիվ հարդարանք

Գանձասարի և Դադիվանքի Կաթողիկեները հարդարված են դեկորատիվ կամարաշարով։ Գեղարվեստական այս հնարքն իր զարգացումն է ստացել նաև Անիում (Մայր տաճար, Փրկչի եկեղեցի) (նկ. 5) ։

Մարմաշենի փոքր, Անիի Տիգրան Հոնենցի, Պեմզաշենի Առաքելոց և Գտչավանքի գլխավոր եկեղեցիների շքամուտքերի լուծումները նույնպես նույնական են. կիսագլանիկներից բաղկացած կրկնակի կամարը հանգչում է գնդաձև խարիսխներ և խոյակներ ունեցող կիսասյունիկների փնջերի վրա։

Միջնադարյան հայկական ճարտարապետության մեջ տարածում ունեն եկեղեցիների մանրակերտերը։ Դրանք իրենց նշանակությամբ լինում են նվիրատվական, մասունքների պահպանման տուփ, ճակտոնազարդ և տիպար (Cuneo 1969)։ Գանձասարի Հովհաննես Մկրտիչ տաճարի թմբուկի և Դադիվանքի Կաթողիկեի հարավային և արևելյան պատերի մանրակերտերը՝ պատկերաքանդակների հետ պատկանում են նվիրատվական տիպին (Մնացականյան 1976, 106-109) (նկ. 6)։ Դադիվանքի Արզուխաթունի եկեղեցու հարավային ճակատին՝ պատուհանի երկու կողմերում, ամբողջ բարձրությամբ Արզուխաթունի երկու որդիներն են՝ Հասանը և Գրիգորը։ Արևելյան ճակատի պատկերաքանդակը լուսամուտի հետ մեկ ընդհանուր հորինվածք է կազմում և վերջինիս գերիշխող թեման է։ Այստեղ քանդակված են Սուրբ Դադին և իշխան Վախթանգը (Արզուխաթունի ամուսինը)։ Քանդակները պահպանվել են գոտկատեղից վերև միայն։ Իշխանի և իր որդիների դիմաքանդակները նման են միմյանց՝ լուսապսակով, թավ մորուքով, առանց բեղերի մասնատման։ Սուրբ Դադին գլխաբաց է, նույնպես մորուքով և լուսապսակով։ Նրանց երկուսի ձեռքերն էլ ուղղված են դեպի լուսամուտի վերևում և դրա առանցքով քանդակված մանրակերտը։ Եկեղեցու մանրակերտը պատուհանի վերևում է (նկ. 6)։ Հասանը և Գրիգորը պատկերված են լուսապսակներով. նման պատկերագրությունն, ինչպես նկատել են հետազոտողները, հազվադեպ է նմանատիպ հուշարձաններում և շեշտում է Արզուխաթունի իշխանազուն որդիների բարձր սոցիալական կարգավիճակը (Հասրաթյան 1992, 48)։

Գանձասարում թմբուկի կենտրոնական առանցքից աջ և ձախ նիստերի վրա պատկերված են ծալապատիկ նստած նույնադեմ, բեղ-մորուքով, նույնազգեստ և նույնահարդար երկու տղամարդ, որոնք գլխավերևում պահում են եկեղեցու մեկական մանրակերտ (նկ. 6)։ Հետազոտողների մի մասի կարծիքով դրանք եկեղեցու կառուցման պատվիրատուներ Հասան Ջալալ Դոլայի և նրա որդի Աթաբակի

քանդակներն են (Մկրտչյան 1985, 13)։ Կարծիք կա նաև, որ որպես պատվիրատուներ ներկայանում են Հասանի հայր Վախթանգը և որդին՝ Հասանը. ձախ կերպարը ներկայացնում է Վախթանգին, աջը՝ Հասանին (https://monumentwatch.org)։

Հառիճավանքի Սբ. Աստվածածին եկեղեցում իրենց դեկորատիվ մշակմամբ առավել հարուստ են արևելյան և հյուսիսային ճակատները (Մնացականյան 1976, 104-105)։ Իվանե և Զաքարե եղբայրների բարձրաքանդակով արևելյան ճակատի կտիտորական ավանդական հորինվածքը ներկայացնում է դեմ առ դեմ կանգնած Զաքարյան եղբայրներին, որոնց իրար մեկնած ձեռքերի վրա ժամանակին տեղավորված է եղել եկեղեցու մանրակերտը. «...արյանք քաջազօր սպասալարացն Զաքարէի և Իվանէի ունենալով ի ձեռին զփոքրիկ եկեղեցի» (Զալալեանց 1842, 212)։ Վերջինս այժմ չի պահպանվել։ Մանրակերտի տեղում 1895 թվականին տեղադրվել է Աստվածամոր մի մարմարե պատկեր (Մնացականյան 1976, 105)։ Սբ. Աստվածածին եկեղեցու կտիտորական քանդակում պատկերված իշխանների հագուստը համարյա նույնական է Դադիվանքում արցախցի իշխանների հանդերձանքի հետ (նկ. 6)։

Գանձասարի եկեղեցում հանդիպում է նաև մանրակերտի՝ ճակտոնազարդ ծառայող տեսակը։ Շենքի բոլոր չորս ճակտոնների գագաթները զարդարում են միմյանցից տարբեր մանրակերտներ, որոնք պատկերում են փոքրիկ գմբեթներ։ Նման ճակտոնազարդը հանդիպում ենք նաև Հառիճավանքում (նկ. 6)։

Գանձասարի վանքի Հովհաննես Մկրտիչ և Հառիճավանքի Սբ. Աստվածածին եկեղեցիների դեկորատիվ հարդարանքի և բարձրաքանդակների ընդհանրություններն իրենց բացատրությունն ունեն պատմական համատեքստում։ Հայտնի է, որ Հայաստանի կառավարիչներ Իվանե և Զաքարե Զաքարյանները Հասան Զալալի մոր՝ Խորիշահի հարազատ եղբայրներն էին և ավելի քան հավանական է, որ նրանց բարձր հովանավորությամբ (քաղաքական և ֆինանսական) և աջակցությամբ է կառուցվել եկեղեցին։ Ի դեպ Հասան Զալալի երկու կրտսեր եղբայրները կրում էին Իվանե և Զաքարե անունները (Յակոբեան 2010, 112-114)։

Արցախի և Շիրակի ճարտարապետության գեղարվեստական արտահայտչականության առնչությունների մասին է վկայում «գեղատեսիլ ոճի» կիրառումը։ Այս ոճը 13-14-րդ դարերում տարածման լայն աշխարհագրություն ունի՝ Բալկաններից և Արևելյան Եվրոպայից մինչև Անդրկովկաս ու Միջին Ասիա։ Հայաստանում այն ավելի վաղ՝ 12-13-րդ դարերում է ի հայտ գալիս և կապված է Անիի քաղաքային մշակույթի հետ (Якобсон 1972, 172)։ Գեղատեսիլ ոճի հիմնական առանձնահատկություններից է ճակատների շքեղ զարդարումը, հարդարանքի տարրերի ասիմետրիկությունը, բազմագունությունը։

Այն վառ արտահայտվում է ինչպես պալատների ու եկեղեցիների, այնպես էլ հյուրատների-քարավանատների ճարտարապետության և նույնիսկ Անիի ամրոցաշինության մեջ։ Անիում շատ գեղատեսիլ է Պարոնի պալատի ճակատը։ Վերևում վարդագույն և սև քարե սալիկների շախմատաձև շարվածք է, ներքևում՝ մուտքի բացվածքն է ութաթև աստղերի տեսքով՝ փորագրված քարե խճանկարի ետնախորքի վրա, որոնց արանքներում սև խաչեր են։ Ճակատները զարդարված էին խճանկարներով։ Հառիճավանքի տաճարի թմբուկը զարդարված է ներքին հարդարման այնպիսի տարրերով, ինչպիսիք են տների ներսում պատերին կախ-

ված ափսեները: Այս տեսակետն էր արտահայտում Յակոբսոնը (Якобсон 1972, 173): Մեկ այլ մոտեցմամբ Հառիճավանքի, Գանձասարի, Հովհաննավանքի գլխավոր եկեղեցիների թմբուկների սկավառակները պատկերում են Երկնային պատարագը խորհրդանշող քշոցներ (Аветисян 2023, 231, Ավետիսյան 2021, 280-281):

Դադիվանքի Կաթողիկե եկեղեցու ճարտարապետությանը ևս աշխուժություն է հաղորդում բազմագունությունը: Կաթնագույն ֆելզիտով շարված կամարաշարերը, շքամուտքերը, զարդաքանդակները ընդգծվում են պատերի գորշավուն մակերևույթների ետնախորքի վրա: Պատերի շարքերում օգտագործված են նաև բաց վարդագույն տուֆ քարեր:

«Գեղատեսիլ ոճ»-ը կիրառություն է ստացել նաև Արցախի «Բռի եղցի» վանքի ամենափոքր եկեղեցու ճակատում (Киракосян 2023, 257): Այն ունի ճակատի հարուստ և շքեղ ձևավորում՝ ողջ մակերեսը ծածկված է թռչնակերպ երկրաչափական քանդակներով, խաչքարերով: Շեշտված է արևմտյան շքամուտքը՝ կիրառված են պարանահույս քանդակներ, ճակատակալը (տիմպանը) ծածկված է շեղանկյուններից կազմված ցանցով: Ըստ թվակիր արձանագրության՝ այս եկեղեցին կառուցել է Խաչենիկ վարդապետը, ով Անիից էր (ԴՀՎ, 154): Վարպետը ճակատը ձևավորել է յուրօրինակ. հանդիսավորությունն ստացվել է գորգային հարդարանքով խճանկարի տեխնիկայի հնարքներով լուծված (նկ. 7): «Բռի եղցիի» չորրորդ եկեղեցու արևմտյան ճակատի ձևավորումը նման է Խաչենիկի կառուցած եկեղեցու համանման ճակատի հարդարանքին: Այստեղ մուտքի ճակատակալը ոչ թե շեղանկյուններով է զարդարված, այլ շախմատաձև հարթաքանդակ է, կենտրոնում՝ «ծաղկած խաչ»:

Վանքի կազմում են նաև երեք ինքնատիպ հուշակոթողներ: Դրանք երկթեք ծածկով, խոշոր կամարակապ խորշեր են, որոնց մեջ ագուցված են խաչքարեր: Հարավարևմտյան՝ 3,6 մ բարձրությամբ կոթողը նույնպես, ըստ արձանագրության, կերտել է եկեղեցին կառուցող անեցի վարպետ Խաչենիկը (ԴՀՎ, 154): Այս հանգամանքը խոսում է այն մասին, որ մայրաքաղաքից հրավիրված ճարտարապետի մասնակցությունն արցախյան վանքի եկեղեցու և կոթողի կառուցմանն իր հետ բերել է շինությունների ճակատների ձևավորման մեջ «գեղատեսիլ ոճ»-ի կիրառմանը: Անեցի վարպետի վավերացված գործունեությունը Արցախում վկայում է Շիրակի և Արցախի ստեղծագործական դպրոցների կապերի և առնչությունների մասին և միջնադարյան վարպետների համագործակցության օրինակ է:

Եզրակացություն

1. Արցախի և Անի-Շիրակի ճարտարապետական դպրոցները միջնադարում միմյանց հետ սերտ կապ են պահպանել և միջնադարյան հայկական ճարտարապետական մշակույթի անբաժանելի մասերն են:
2. Ճարտարապետական ընդհանրությունները արտահայտվել են հատակագծային և ծավալատարածական հորինվածքներում, կոնստրուկտիվ լուծումներում, շինարարական տեխնիկայում և զարդամոտիվներում:
3. Անիում ձևավորված ճարտարապետությունը էտալոնային է, և այդ ոճը անեցի վարպետների միջոցով տարածում է ստանում նաև այլ տարածաշրջաններում, մասնավորապես Արցախում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

ԱԼԻՇԱՆ 1881 - Ալիշան Ղ., *Շիրակ*, Վենետիկ, 1881:

ԱՎԵՏԻՍՅԱՆ 2021 - Ավետիսյան Թ., *Քշոցն ու խաչվառը XIII դարի սկզբի հայկական եկեղեցիների թմբուկների հարդարանքում (Հառիճավանք, Հովհաննավանք, Գանձասար)*, Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, Գիտական աշխատություններ, 3 (24) 2021, Գյումրի, 277-287:

ԴՀՎ 1982 - Դիվան հայ վիմագրության, պրակ 5, *Արցախ*, Երևան, 1982:

ԹՈՐԱՄԱՆՅԱՆ 1942 - Թորամանյան Թ., *Նյութեր հայկական ճարտարապետության պատմության*, հ. 1, Երևան, 1942:

ԼԵՈ 1885 – Լեո, *Իմ հիշատակարանը*, Շուշի, 1885:

ՀԱՍՐԱԹՅԱՆ 1992 - Հասրաթյան Մ., *Արցախի ճարտարապետական դպրոցը*, Երևան, 1992:

ՀԱՍՐԱԹՅԱՆ 2011 - Հասրաթյան Մ., *Անիի ճարտարապետությունը*, ՊԲՀ, թիվ 2, 2011, 3-27:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ - Հարությունյան Վ., *Հայկական ճարտարարապետության պատմություն*, Երևան, 1992:

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ 1964 - Հարությունյան Վ., *Անի քաղաքը*, Երևան, 1964:

ՄԿՐՏՉՅԱՆ 1985 - Մկրտչյան Շ., *Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձաններ*, Երևան, 1985:

ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ 1976 - Մնացականյան Ս., *Հայկական աշխարհիկ պատկերաքանդակը 4-14-րդ դարերում*, Երևան, 1976:

ՅԱԿՈԲԵԱՆ 2010 - Յակոբեան Ա., *Խաչեն-Խօխանաբերդ ամրոցը և նրա իշխանատոհմը Թ- ԺԳ դարերում*, Հանդէս ամսօրեայ, Վիեննա-Երևան, 2010, 71-170:

ՊԵՏՐՈՍՅԱՆ, ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, ՍԱՖԱՐՅԱՆ 2009 – Պետրոսյան Հ., Կիրակոսյան Լ., Սաֆարյան Վ., *Հանդարերդի վանքը և նրա պեղումները*, Երևան, 2009:

ՋԱԼԱԼԵԱՆՑ 1842 - Ջալալեանց Ս., *Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան*, մասն Ա, Տփխիս, 1842:

ՍԱՀԻՆՅԱՆ 1955 - Սահինյան Ա., *Քասախի բազիլիկայի ճարտարապետությունը*, Երևան, 1955:

АВЕТИСЯН 2023 - Аветисян Т., Церковь Ованеса Мкртича Гандзасарского монастыря и ее скульптурная программа, *Армянский гуманитарный вестник*, 1 (10), Арцах, Ереван, 2023, 224-249:

БУНИАТОВ 1915 – Буниатов Н., *Дворцовая церковь в Ани*, СПБ, 1915.nժպ

КАЗАРЯН 2012 – Казарян А., *Церковная архитектура стран Закавказья VII века. Формирование и развитие традиции*, т. 3, Москва, 2012.

КАКОВКИН 1987 - Каковкин А., О датировке росписей храма св. Григория (1215 г.) в Ани, его часовни и притвора, *Византийский временник*, том 48, 1987, 107-115.https//doi.org/10.58226/25-79-275X-2023.10

КИРАКОСЯН 2023 - Киракосян Л., Церкви Арцаха типа сводчатого зала, *Армянский гуманитарный вестник*, 1 (10), Арцах, Ереван, 2023, 249-264:

МАРР 1898 - Марр Н., Ани, столица армянских Багратитов, «Братская помощь пострадавшим в Турции армянам», *Литературно-научный сборник*, Москва, 1898.

ОРБЕЛИ 1910 - Орбели И., *Ани, Краткий путеводитель по городу*, Анийская серия N4, С.-Петербург, 1910.

ТОКАРСКИЙ 1973 – Токарский Н., *По страницам истории армянской архитектуры*, Ереван, 1973.

ЯКОБСОН 1972 - Якобсон А., Некоторые закономерные особенности средневековой фр-

хитектуры Балкан, Восточной Европы, Закавказья и Средней Азии, «*Византийский Временник*», т. 33, М., 1972, 166-189:

ЯКОБСОН 1977 - Якобсон А., Из истории армянского средневекового зодчества (Гандзасарский минастырь XIII в.), *Вестник общественных наук*, №12, 1977, 116-124:

CUNEO 1978 - Cuneo P., *Le scoule regionali nell architettura Armen*a, ,,Atti del Primo Simposio Internazionale di Arte Armena - 1975, Venezia, 1978.

THIERRY 1993 - Thierry N. et M., *L'eglise Saint-Gregoire de Tigran Honenc' a Ani* (1215), Louvain-P., 1993.

Էլեկտրոնային աղբյուրներ

Գանձասարի Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գմբեթն ու քանդակային հորինվածքները, https://monumentwatch.org/ ru / (դիտվել է 03.04.2024)

Lyuba Kirakosyan

Doctor of Architecture, Professor

National University of Architecture and Construction of Armenia,

Yerevan State University

kirakosyanlyuba@gmail.com

THE COMMONALITIES OF THE CULT ARCHITECTURE OF ANI-SHIRAK AND ARTSAKH

Keywords: Ani, Artsakh, cult architecture, composition, structure, comparative analysis.

The religious monuments of Shirak and Artsakh regions are an important and integral part of the Armenian medieval architectural heritage. While having specificities dictated by local and topographical conditions, these two architectural schools also exhibit commonalities. In order to reveal them, a comparative analysis of contemporary churches belonging to Ani-Shirak and Artsakh schools of architecture (Ani Cathedral, Harichavank, Marmashen, Gandzasar, Dadivank, Gtchavank, Handaberd, Yeghisha Apostol, "Bri Eghtsi" and other monasteries) was carried out.

The research aims to reveal an overall picture of fictional, structural, artistic features and similarities of the architectural structures in question. The topic is more than topical, because the encroachments on the architectural heritage of Artsakh and the policy of alienating it from the Armenian medieval culture, carried out by Azerbaijan since the second half of the last century, have taken an unprecedented pace. From the standpoint of academic science, an attempt is made to show that the architectural heritage of these two regions shows indisputable commonalities and is one of the components of the Armenian medieval architectural culture. These commonalities have found their expression in the art of construction, the techniques of using the traditional building material - stone, structural systems, artistic expressions, plan and volume-spatial inventions, patterns of hereditary connection and harmony.

Special emphasis is placed on the fact that the architecture formed in the medieval Ani is a benchmark and this style is spreading in other regions, particularly in Artsakh, through the masters of Ani. The research was carried out by the method of generalization of experience, comparative analyzes and typological characterizations.

Люба Киракосян

Доктор архитектуры, профессор

Национальный университет архитектуры и строительства Армении,

Ереванский государственный университет

kirakosyanlyuba@gmail.com

ОБЩИЕ ЧЕРТЫ КУЛЬТОВОЙ АРХИТЕКТУРЫ АНИ-ШИРАК И АРЦАХА

Ключевые слова: Ани, Арцах, культовая архитектура, композиция, структура, сравнительный анализ.

Важной и неотъемлемой частью армянского средневекового архитектурного наследия являются культовые памятники Ширакского и Арцахского регионов. Наряду с особенностями, продиктованными местными и топографическими условиями, эти две архитектурные школы также демонстрируют общие черты. Для их выявления были проведены исследования и сравнительный анализ относящийся к тому же периоду церквей, принадлежащих Ани-Ширакской и Арцахской архитектурным школам (Кафедральный собор Ани, Аричаванк, Мармашен, Гандзасар, Дадиванк, Гтчаванк, Гандаберд, Егиша Аракел, «Бри егци " и других монастырей). Тема более чем актуальна, поскольку посягательства на архитектурное наследие Арцаха и проводимая Азербайджаном со второй половины прошлого века политика отчуждения его от армянской средневековой культуры набрали беспрецедентные темпы. С позиций академической науки делается попытка показать, что архитектурное наследие этих двух регионов демонстрирует бесспорные общие черты и является одной из составляющих армянской средневековой архитектурной культуры. Эти общие черты нашли свое выражение в строительном искусстве, приемах использования традиционных строительных материалов, таких как камень, структурных системах, средствах художественной выразительности, планировочных и объемно-пространственных композициях, в декоре, наследственной связи и гармонии. Особо подчеркивается то обстоятельство, что средневековая архитектура в Ани является эталонной и благодаря мастерам Ани этот стиль распространяется и в других регионах, в частности, в Арцахе. Исследование проводилось методом обобщения опыта, сравнительного анализа и типологических характеристик.